

գաթը կը կուփահարեն, նոյն ուժով ալիքներն ալ իր կողերը կը բաղխեն ան դադար, որով ինչ որ ժայռին ամբողջ ջութեանը հետ միացած չէ կը փրցնեն ու անդունդին մէջ կը գլորեն: Այսպէս սով ահա քամիները ալիքներուն հետ միացած Սդաֆայի ծովափունքը գիշեր ցորեկ տաշելով կոփելով հարթայատակ մաքրեր են, որոնք պաղաղի սիրուն կութողներէն ձևացած են և քովէ քով մէկ կարգի վրայ խիտ առ խիտ շարուած ըլլալուն համար, բարձր պարիսպներու պէս կղզիին բոլորտիքը կը շրջապատեն: Այս համակ քարաշէն բերդիս վրայ միայն կողմանէ կրնայ ելլուիլ, որ կարծես թէ անսպառ հարստութիւններ ունեցողի մը պէս այնչափ ամուրթիւններով պատսպարուած է. ծովուն մէջ դուրս երկնցած տափարակ ժայռի թև մը կայ, որուն քով միայն կրնան նաւակները մտնելալ. բայց ան ալ շատ մեծ զգուշութեամբ: Ինչուան հիմա որոնք որ հոն բնակութիւն ուզեր են հաստատել, ամէնքն ալ նոյն տեղէն միայն ցամաք կրցեր են ելլալ, բայց ամէն անգամ ալ փոթորիկը զիրենք վաներ է. այնչափ անմատչելի է աս կղզիս:

Դրուալիոս Ուբսալայի արքեպիսկոպոսը 1772ին միջոցները Վուք նաւապետին և իրեն երկու ընկերներովը աս կղզին այցելութիւն մը ընելով, գեղացիէ և կովէ մը զատ ուրիշ բան չգտան: Ուբսալայի արքեպիսկոպոսը կ'ըսէ թէ՛ «Ս'եր գալտեանը վրայ խեղճ գեղացին ունեցած ուրախութիւնը յայտնելու համար, բոլոր գիշերը՝ Նորուեկիայի գաւառական լեզուով երգեր երգելով անցուց, զոր մենք ամենեւին չէինք հասկընար, և մեզի կաթնեղէն ու ձու հրամցուց:», Վսան տարի ետքը բնակութիւնը շատցաւ. և ինչպէս որ ճանապարհորդ մը կը պատմէ, «Սդաֆայի բնակութիւնը, կ'ըսէ, երկու գերդաստանէ կը բաղկանար, որոնք երկու աղքատին հիւղերու մէջ ապաստանած էին, ժայռերու մէջ սրազալդի ու լաւայի կտորուանքներէ շինուած, վրան ալ խոտով ծածկուած: Այս երկու գեր-

դաստանաց անձինքը 16 հոգի էին և ունեցած հարստութիւննին ալ էր մէկ ցուլ մը, ութը կով, վեց ոչխար, երկու այծ, երկու շուն, մէկ խոզ մը, մէկ աքաղաղ և ութ ալհաւ:», Այս գաղթականները կաթնեղէնով, ձկներով ու ծովային թռչուններով և քիչ մ'ալ գետնսիսնձորով կը կերակրէին, որ ժայռերուն վրայ մեծ աշխատանքով բռցնել կու տային: Իսկ խամճնին միգով ու անձրևով ժողվուած ջուր մըն էր զոր չափով կը խմէին. վառածնին ալ կտոր մը չոր խոտ էր: Արկայն տարիներ այդպիսի թշուառ կեանքի մը տառապանքներուն հետ մաքառելէն ետև՝ վերջապէս թողլով Սդաֆան ելան գացին: Այս դարուս սկիզբէն սկսեալ մինչև ցայսօր այս կղզիս բնակելի եղած չէ, բայց միայն երբեմն երբեմն Ս'ը կղզիին ձկնորսներէն ու որսորդներէն հոս կու գան ձուկ որսալու և թռչնոց բոյներ ժողվելու համար: Եւսպէտ և մարդուս անկարելի եղած է այդ կղզւոյն վրայ ոտք հաստատելը, սակայն բնութեան գեղեցկութեանց սիրող մարդիկ երթալով կը յաճախեն իրենց այցելութիւնը: Ասան զի թէպէտ և Սդաֆայի այն գեղեցկութիւնները, զոր ինչուան հիմա ըսինք, իրաւցնէ տեսնելու ամենաարժանի հրաշալիքներ են, սակայն կղզւոյն ամենէն հիանալի շէնքը իր հրաշակերտ այրն է, որուն վրայ խոսիլը զանց կ'ընենք, արդէն ուրիշ անգամ Վազմափիպիս էջերուն մէջ խօսած ըլլալով:

Որ անարգէ զսակաւս, առ 'ի փոքր փոքր կործանեսցի:
 Որ վաղվաղկոտ է 'ի հաւատալ՝ թեթև է սրտիւ, և որ յանցանէ և յանձն իւր մեղանչէ:
 Ի բարեկամն և 'ի թշնամին մի յօժարել երկրորդէլ զբանն:
 Լուար ինչ բան, մեռցի անդրէն 'ի սրտի քում. պինդ կաց որ ոչ հերձու և ելանէ արտաքս:

ԻՄԱՍՏ · ՅԵՍՈՒԱՅ

